

Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբ այսօր հանդիպում մը պիտի ունենայ Մուրիդի նախագահ Պաշշար Ասատի հետ՝ քննարկելու համար պաղեստինեիսրայէլեան տագնապն ու Իրաքի իրավիճակը: Հանդիպումը տեղի պիտի ունենայ Գահիրէի մէջ, յայտնեցին պաշտօնատարները:

Մուպարաբ - Ասատ վերջին հանդիպումը տեղի ունեցած էր Ապրիլ 20ին Դամասկոսի մէջ:

(ԱՅՓ)

### ԻՐԱՔԻ ՄԷՋ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐԸ ԳԵՏՁՅԵՏ ԵՆԴ ԿԱՑՈՒԹԵԱՆ ԿԸ ՄԱՏՆՈՒԻՆ

## ՊԱՅԹՈՒՄ ՍԸ ՑՆՑԵՅ ՈԱՄԱՏԻ ԲԱՂԱՔԸ՝ ԽՆԵԼՈՎ 7 ՁՈՇ ԵՒ 45 ՎԻՐԱԿՈՐ, ՄԻՆՉ ԹՈՒՐԵՒԱ ԲՈՂՈՔԻ ՁԱՅՆԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՅՆԵ ՈՒԱՇԻՆԿՈՐԵՆԻ ԴԵՄ՝ ԹՈՒՐԵ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԸԱՍԱՐ

Թուրք պինուորներու ձերբակալութիւնը եւ իրաքցի ոստիկաններու դէմ յարձակում մը նեղ կացութեան մատնեցին Միացեալ Նահանգները Իրաքի մէջ, ուր ամերիկեան ուժերուն դէմ դիմադրութիւնը օրըստօրէ թափ կը ստանայ: Թուրքիա բարձրացուցած է բողոքի ձայնը Ուաշինկթընի դէմ, բացատրութիւն պահանջելով պինուորներուն ձերբակալութեան արարքին մասին: Վարչապետ Անճէփ Էրտողան կառավարութեան արտակարգ նիստ մը գումարեց Շաբաթ օր՝ քննարկելու համար կացութիւնը: Արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլ յայտնեց, որ Էրտողան հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիք Չէյնիի հետ:

Միջադէպը տեղի ունեցաւ Ուրբաթ երեկոյեան: Աւելի քան հարիւր ամերիկացի պինուորներ ներխուժած են Սիւլէյմանիէի մէջ թրքական մասնաւոր ուժերու կեդրոն մը: Չինուորները կտրած են հեռաձայնի թելերը եւ ապա՝ ձերբակալած են 11 սպաներ եւ պինուորներ, զորս Քերքուք փոխադրած են: Ըստ «Հիրրիէթ» օրաթերթին ամերիկեան ուժերու տեղեկութիւններ հասած են, թէ թուրք պինուորները յարձակում մը կը ծրագրեն Քերքուքի կառավարչին դէմ: Մինչեւ երէկ ձերբակալուածները տակաւին ազատ չէին արձակուած: Անգաւրայի ամերիկեան դեսպանատան դիմաց հարիւրաւոր թուրքեր բողոքի ցոյց մը կազմակերպեցին՝ պահանջե-



Թուրքերը կը բողոքեն

լով ձերբակալուածներուն ազատ արձակումը: Իրաքի մէջ ամերիկեան իշխանութիւններ այլ հարուած մը ստացան երբ Շաբաթ օր պայթումի մը պատճառով սպաննուեցան ամերիկեան ուժերու կողմէ մարտնչող իրաքցի եօթը ոստիկաններ եւ բրիտանացի լրագրող մը: Մէկ օր առաջ ալ, ենթադրաբար Սատտամ Հիւսէյնի ձայնով իրապարակուած պատգամ մը կոչ կ'ուղղէր իրաքցիներուն հարուածել

ամերիկացիները: Ոստիկաններուն Շաբ.՝ Էջ 2

**ԿԵՐՁԻՆ ԺԱՍ**  
**ԹՈՒՐԵ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԱՁԱՏ Կ'ԱՐՉԱԿՈՒԻՆ**  
Երէկ ուշ գիշերին հաղորդուեցաւ, որ Պաղտստին մէջ ձերբակալուած թուրք պինուորները արդէն իսկ ազատ արձակուած են:

### ԹՈՒՐԵՒԱ ՀԱՒԱՆԱԿԱՆ ԿԸ ՆԿԱՏԵ, ՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՉՈՂ ՕՐԻՆԱԳԻԾԸ ԱՅՍ ՇԱԲԹՈՒԱՆ ԸՆԹԱՅԲԻՆ ՎԱՒԵՐԱՅՈՒԻ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ԿՈՂՄԵ

«Թրքիէ Տէյլի Նիուզ» թրքական անգլիատառ օրաթերթը Շաբաթ օր հաղորդեց, որ Հայկական Յեղասպանութեան անդրադարձող օրինագիծը այս շաբթուան ընթացքին հաւանաբար ներկայացուի Միացեալ Նահանգներու Ծերակոյտին:

Նշենք, որ օրինագիծը կ'առնչուի Միացեալ Նահանգներու կողմէ Յեղասպանութիւններու կանխարգիլման մասին ՄԱԿի Յեղասպանութեան Ուխտի ընդունման 15 ամեակին: Օրինագիծը կոչ կ'ուղղէ դատեր քաղէ Հայկական Յեղասպանութենէն, Ողջակիցումէն եւ 20րդ դարու այլ ողբերգութիւններէն:

Յարդ հրապարակուած տեղեկութիւններուն համաձայն, Քոնկրէսի ներկայացուցիչներու Տան իրաւաբանական յանձնաժողովի կողմէ արդէն ընդունուած այս փաստաթուղթը արժանացած է 30 ժերակուտականներու պօրակցութեան:

Թրքական մամուլը կը նախատեսէ, որ Ծերակոյտին մէջ օրինագիծին ներկայացումը փոթորիկ պիտի յառաջացնէ Անգարայի եւ Ուաշինկթընի միջեւ:

«Թրքիէ Տէյլի Նիուզ» կը նշէ, որ դիւանագէտներ «Անատոլու» թրքական լրատու գործակալութեան յայտնած են, թէ Ծերակոյտին կողմէ օրինագիծին ընդունումը հաւանական է: Թերթը դիտել կու տայ, որ դիւանագէտներուն ենթադրութիւնները հիմնաւորուած կրնան ըլլայ, յատկապէս Իրաքի պատերազմին պատճառով թուրքեւամերիկեան յարաբերութիւններու նահանջին լոյսին տակ:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՐԻԶԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՇԱՀԱՐԿՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՊԻՏԻ ԿՆՔՈՒԻ ԱՅՍ ՇԱԲԱԹ

Հայաստանի կորիզային կայանի շահարկումը «Ռուսիոյ Միացեալ Ուժանիւթի Համակարգեր» ընկերութեան յանձնելու պայմանագիրը պիտի ստորագրուի այս շաբթուան ընթացքին: Հայաստանի ուժանիւթի նախարար Արմէն Մովսիսեան լրագրողներու տեղեկացուց, որ շահարկումը ռուսական կողմին պիտի յանձնուի 5 տարուան համար: Նախարարը յիշեցուց, որ «Ռուսիոյ Միացեալ Ուժանիւթի Համակարգեր»ը փակած է Հայաստանի կորիզային կայանին ունեցած 40 միլիոն տոյարի պարտքը՝ կորիզային ուժանիւթ առաքող կողմերուն: Այդ գումարին 25 միլիոն տոյարը Հայաստան փոխ - հատուցած է «Ռուսիոյ Միացեալ Ուժանիւթի համակարգեր»ուն՝ իբրեւ սեփականութիւն այս ընկերութեան փոխանցելով Հայաստանի Սեւան - Հրապոյտ ջրէլեկտրակայանը, իսկ պարտքին մնացեալ մասը հայկական կողմը երկու տարուան ընթացքին պիտի փակէ էլեկտրակայանութեան վաճառքէն գոյնալիք միջոցներով:

## ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ԵՐԿՈՒ ԿԻՆԵՐ ԱՆՁՆԱՄՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՑԻՆ, ՊԱՏԾԱՌԵԼՈՎ 18 ՁՈՂ ԵՒ ԱԻԵԼԻ ՔԱՆ 50 ՎԻՐԱԿՈՐ

Մոսկուայի մէջ առնուազն 18 կոհ եւ շուրջ 50 վիրաւոր արձանագրուած է Շաբաթ օր, «ռոք» երաժշտութեան փառատօնի մը ընթացքին, երբ երկու կիներ անձնասպանական գործողութիւններու ձեռնարկած են: Պաշտօնատարներ անմիջապէս յայտնած են, թէ անձնասպանական գործողութիւններուն ետին կը կանգնին չեչէն անջատողական ըմբոստներ:

Մոսկուայի ոստիկանութեան մէկ բանբերը յայտնած է, թէ գործողութեան ձեռնարկողներուն կողքին, կոհ գացած է 14 հոգի:  
Ըստ բժշկական աղբիւրներու, 2 այլ անձեր մահացած են հիւանդանոցին մէջ, կոհերու ընդհանուր թիւը 18ի բարձրացնելով:  
Ներքին գործոց նախարար Պորիս Կրիվով ըսած է, թէ գործողութեան հեղինակներէն մէկը ուղղակի կապեր ունեցած է չեչէն ըմբոստիւններէն: Սակայն չեչէն անջատողական ղեկավար Ասլան Մասխա-



տովի Մոսկուա գտնուող մէկ բանբերը երէկ առաւօտուն շեշտած է, որ չեչէն ղեկավարութիւնը պատասխանատու չէ յարձակումներուն:  
Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին

երէկ ցաւակցութիւն յայտնած է կոհերու ընտանիքներուն, սակայն ան ոչինչ ըսած է դէպքին մասին:  
Շաբաթ առաւօտուն, ան պաշտօնական հրամանագիրով մը Հոկտեմբեր 5ը ձեռնած

էր Չեչէնիոյ մէջ նախագահական ընտրութեան ցաւակցութեան թուականը: Մարտին կայացած հանրաքուէի մը, չեչէնները վիճելիօրէն քուէարկած էին ինչպէս Դաշնակցային Ռուսիոյ մէկ մասը

մնալու գաղափարին: **ՂԱՏԱՊԱՐՏՈՒՄ**  
Եւրոպական Միութեան, Չինաստանի եւ Իսրայէլի ղեկավարներ անարդարանալի նկատած են յարձակումը, կոր դատապարտած են:  
Եւրոպական Յանձնաժողովին նախագահը Ռոմանո Փրոտի ցաւակցութիւն յայտնած է Ռուսիոյ եւ ըսած, թէ գործողութիւնները ցոյց կու տան անհրաժեշտութիւնը անհրաժեշտութեան դէմ ճիգերուն թափ տալու:  
Սթրասպուրկի մէջ Եւրոպական Խորհուրդը դատապարտած է ոմբահարումները:  
Ֆրանսա, Գերմանիա եւ Բրիտանիա դատապարտած են յարձակումները:  
Նախագահ ժաբ Շիւրաք շեշտած է, թէ «որեւէ դատ չի կրնար արդարացնել նման արարքները»:  
Գերմանիոյ վարչապետը՝ Կերհարտ Շրեօտըր ըսած է, թէ յարձակումը ցոյց կու տայ, որ «պէտք է ամէն տեսակ ահաբեկչութեան դէմ պայքարիլ՝ առաւելագոյն վճռակամութեամբ»:  
Չինաստանի նախագահ Հու Ճիաքու երէկ ցաւակցութիւն յայտնած է կոհերուն ընտանիքներուն, վերահաստատելով Չինաստանի կառավարութեան «վճռակամութիւնը ամէն տեսակի ահաբեկչութեան դէմ պայքարելու»:  
ՌՈՒՍՈՒ 4 պինուորներ կոհ գացած են եւ առնուազն 11 ուրիշներ վիրաւորուած, երբ անոնց ուղղաթիւրը ջախջախուած է երէկ Չեչէնիոյ մէջ: Չախջախման պատճառը յստակ չէ եղած:

### ՆԱԽԱԳԱՀ ԼԱՅՈՒՏ ՎԱՂԸ ԿԸ ՄԵԿՆԻ ՈՒՔՐԱՆԻԱ

Նախագահ զոր. Էմիլ Լահուտ վաղը պաշտօնակալան երկրորդայնայնացված ժողովուրդը մը կը մեկնի Ուքրանիա, ընդ առաջնորդ նախագահ Լեոնիդ Քուչմայի հրահանգով:

Նախագահ Լահուտի այցելութիւնը Ուքրանիա առաջինն է 1992էն ի վեր, երբ Լիբանան - Ուքրանիա յարաբերութիւններու ամրապնդման առաջին փորձերը կատարուած էին:

Այցելութեան ընթացքին նախագահներ Լահուտ եւ Քուչմայ պիտի ունենան հանդիպումներ, ինչպէս նաեւ այլ հանդիպումներ պիտի կայանան ուքրանացի եւ լիբանանցի պետական ու բարձրաստիճան պաշտօնատարներուն միջեւ:

Պիտի կնքուին նաեւ չորս համաձայնագիրներ, որոնք կ'ապահովեն լիբանանեւուքրանական գործակցութիւնը գիտութեան եւ արհեստագիտութեան, մշակոյթի, զբօսաշրջութեան եւ առողջապահութեան մարզերէն ներս:

Այս իմաստով, նախագահական պալատի ընդհանուր տնօրէնութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ յայտարարեց պաշտօնակալան այցելութեան ամբողջ ծրագիրը:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ երէկ կէսօրէ առաջ ներկայ գտնուեցաւ Պրումանայի վարժարանի շրջանաւարտներու խորհրդաժողովին, որ կատարուեցաւ համաձայն վարժարանին մէջ եւ որուն մասնակցեցան շրջանաւարտներ Սուրիայէն, Պահլէյնէն, Սէուտական Արաբիայէն, Քուէյթէն, Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, Յորդանանէն, Իրաքէն, Բրիտանիայէն եւ Միացեալ Նահանգներէն:

### ՄԵԼԵՄ ԲԱՐԱՄԻ ԸԱՄԱՁԱՅՆ՝ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԱՔԻԱԲԵԼԼԻԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՉԷ, ԱՅԼ՝ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆ...

Խմբագիրներու սենտիքայի նախագահ Մըլիքի Քարամ «Լիբանանի Չայն» կայանին հետ ունեցած հարցազրոյցի մը ընթացքին նկատել տուաւ, որ Լիբանան յստակ քայլերու դիմած է դէպի միասնութիւն: Ան դիտել տուաւ, որ լիբանանեան տեղեկատուութիւնը իր միասնականութեամբ օրինակելի է, վստահեցնելով, որ լիբանանեան տեղեկատուութեան մէջ համայնքայնութեան յարուածութիւնը հրահրող նշոյլ իսկ չկայ:

Քարամ ըսաւ, որ քաղաքականութիւնը Մաքիաբելիի բնորոշած քաղաքականութիւնը չէ, այլ՝ թափանցիկութիւն եւ անկեղծութիւն: Ան մեծ առաջնութիւն նկատեց ժողովրդավարական վարչակարգը, որ կ'արտօնէ ուղղակի հաղորդակցիլ կառավարիչներու եւ երկրին ղեկավարներուն հետ:

Անդրադառնալով նախագահական ընտրութեանց կամ նախագահ Վոր. Էմիլ Լահուտի վերընտրման շուրջ յայտարարութիւններուն, Քարամ շեշտեց, որ այս հարցը ներկայիս արժարժէր սխալ է եւ վտանգաւոր:

Քարամ դատապարտեց կարգ մը քաղաքական անձնաւորութիւններ՝ տեղեկատուութեան ազգային խորհուրդի աշխատանքները խանգարելու «յանցանքով», եւ անդրադառնալով նշեալ խորհուրդը լուծելու կարգ մը անձնաւորութեանց ջանքերուն, ան ըսաւ, որ Լիբանանի մէջ ամէն բան ենթակայ է փոփոխութեան, նոյնիսկ կառավարութեան կազմը:

Ընտրական նոր օրէնքի մշակումին մասին հարցումի մը պատասխանելով, Քարամ առաջարկեց հանրաքուէի դնել ծրագիրները:

### ՊԱՅԹՈՒՄ ՄԸ ՑՆՑԵՑ ՈՒԱՄԱՏԻ ԲԱՂԱՔԸ՝ ԽԼԵԼՈՎ 7 ՉՈՒ ԵՒ 45 ՎԻՐԱՒՈՐ...

Շարունակուած Ա. Էջէն

սպանութիւնը տեղի ունեցաւ Ռամատի քաղաքին մէջ, որուն ոստիկանապետը յայտնեց, որ ոստիկանները կ'ամբողջացնէին մարտնչի երրորդ օրը, երբ պայթուած տեղի ունեցած է համակարգիչներու կեդրոնին դիմաց՝ ոստիկանատան կից: Ոստիկանապետը ըսաւ, որ եօթը փոհերուն կողքին ինկած են աւելի քան 45 վիրատուներ: Անբերկեան պիւնուորական աղբիւրները սակայն յայտնեցին, որ 13 վիրատուներ արձանագրուած են:

Իրաքի մէջ անբերկեան քաղաքային իշխանութեան ղեկավար Փօլ Պրեմըր դատապարտեց արաբը: Ան ըսաւ, որ Սատտամի հետեւորդներն են պատասխանատուները այս անարգ արարքներուն: Պրեմըր աւելցուց, որ հարուածը այս



անգամ անմեղ իրաքցիներուն դէմ եղած է: Ան շեշտեց սակայն որ այս բոլոր արարքները որեւէ ձեւով պիտի չազդեն անբերկեան ուժերուն ներկայութեան եւ առաքելութեան, որոնք պիտի շարունակուին: Պրեմըր յայտարարեց նաեւ, որ Սատտամը եւ անոր իշխանութիւնը անվերապարձ կորստուած են, իսկ եթէ Սատտամ ողջ է, անպայման պիտի ձերբակալուի:

մը ինկած է:

● ԵՄԵԼՍԹԻ Ինթերնէշնալ քննադատեց Իրաքի հարաւային շրջանը գտնուող բրիտանական ուժերը՝ պահանջելով որ անոնք վերջ տան տիրող անիշխանութեան, ապահովութիւն ու կայունութիւն հաստատելու համար շրջանին մէջ:

● ՄԻԱՅԵԱԼ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ քննադատեց Իրաքի մէջ անբերկեան քաղաքականութեան հանդէպ թերահատուցեց, դիտել տալով որ Իրաքի վերականգնման ժամանակի կը կարօտի:

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒԱՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն

8:45.- «Աստղեր»

9:00.- «Ռատիօ-Թատրոն».

Կեղինակ՝ Ծահանդուխա. Կը ներկայացնեն Սարի Ռոզ Մանուկեան եւ Մանուկ Մարգարեան

10:35.- «Երկիր Նայիրի».

Շայտտամի մշակութային հարստութիւններու եւ տարբեր մարզերու զբօսաշրջային վայրերու ծանօթացում

11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն

3:00.- Արաբերէն յայտագիր. Պէյք էլ Տիմի փառատօնին առիթով՝ հարցազրոյց կազմակերպիչ յանձնախումբի լրատուական բաժնի պատասխանատու Գալա Ծահիմի հետ

4:45.- «Վանայ սփոր».

անցնող շաբթուան մարզական լուրերու ներկայացում

6:00.- «Դալար բարտի».

հայերէն հարցազրոյց երգի մատուցում

8:00.- «Այլ Վանայ Չայն».

խաղ - մրցանք ուղղակի ձայնափոխում

**ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈՒԼԵՃ**  
ՔԱՆԹԱՐԻ, ՊԵՅՐՈՒԹ, ՀԵՌ. 349816  
2003-2004 ՏԱՐԵՐԾԱՆ

- 1.- Հայ Աւետարանական քուլէճ ունի բողոքօքն մինչեւ Բ. պաշարտա դասարան:
- 2.- 2003-2004 տարեշրջանի նախնական արձանագրութիւնները արդէն իսկ սկսած են հին եւ նոր աշակերտներու համար:
- 3.- Նորեկ աշակերտներու դիմումագիրները կ'ընդունուին ամէն օր, Երկուշաբթիէն Ուրբաթ, կէսօրէ առաջ ժամը 9:30էն 12:30:
- 4.- Վերամուտ՝ 1 Շոկտեմբեր 2003:

**Նոտութիւններ.**

- Ե. Ա. Բ. 80ամեակի առթիւ կորթնակալի յատուկ սակեր
- Բացառիկ զեղչեր նորեկ փայլուն աշակերտներու
- Բոլոր շրջաններու համար օթոպիսի սպասարկութիւն
- Վճարման դիւրութիւններ

Հայ Աւետարանական Քուլէճ, Մեքսիք փողոց, Զանթարի, Հայկազեան համալսարանին կից, «Թրատ» հիւանդանոցի փողոց:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

**ԸՆԴՈՐՈՒԳՐՈՒԹԻՒՆ**

ՀԱՅ ԱՌԵՏ. ՔՈՒԼԵՃԻ 80ԱՄԵԱԿԻ ԿՐԹԱՆՊԱՍՏԻ ՖՈՐՏ

Հայ Աւետարանական Ա. Եկեղեցին՝ Հայ Աւետ. Քուլէճի առաքելութեան եւ ծառայութեան հանդէպ ունեցած յանձնառութեան եւ աջակցութեան որպէս գործնական արտայայտութիւն, ուրախութիւնը ունի յայտարարելու, թէ հիմնած է Հայ Աւետ. Քուլէճի 80ամեակի Կրթամասի ֆոնդը, որուն կրնան դիմել բոլոր այն հայ աշակերտները, որոնք նիւթական պատճառներով հեռացած են Հայ Դպրոցէն, զանոնք տուն՝ Հայ Դպրոց վերադարձնելու համար:

Փափաքողներն կը խնդրուի դիմել Հայ Աւետ. Ա. Եկեղեցիի գրասենեակ՝ դիմումագիրը եւ անջնուող բոլոր մանրամասնութիւնները ստանալու համար:

ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՎԵՂԵՑԻԻ ԺՈՂՈՎԵՐ

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»

**ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԱՒԱՔՈՂ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ**

«Վանայ Չայն» կարիքը ունի ծանուցումներ հաւաքող ներկայանալի երիտասարդուհիներու եւ երիտասարդներու, որոնք պիտի աշխատին շահաբաժնի դրութեամբ: Հայերէնի կողքին ֆրանսերէն կամ անգլերէն եւ արաբերէն գիտնալը պայման է:

Կը խնդրուի անձամբ ներկայանալ «Վանայ Չայն»:

**3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը մեր յարգոյ ազգայններուն կը յայտնէ, որ ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն կէսօրէ ետք ժամը 5:00, իսկ Շաբաթ օրերը առաւօտեան ժամը 8:30էն 12:30, կ'ընդունի դիմումներ զանազան նախարարութիւններու եւ պետական հաստատութիւններու կապուած որեւէ հարցի վերաբերեալ:

Այսուհետեւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէան ամէն Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9:00էն 11:00 ներկայ պիտի ըլլայ Երեսփոխանական Գրասենեակ, «Շաղգոյեան» կեդրոն, Բ. յարկ, ուր պիտի ընդունի քաղաքացիներուն դիմումները:

ՀԱՅԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

**Orient plus**  
KHARBAZ TRAVEL & TOURISM  
Touch New Worlds

**Jarna**  
\$319

8 days - Direct Charter Flight Every Tuesday starting from 8 July

Other Destinations  
Bout Trip to Cyprus 3 Days Cyprus & Greece  
\$190 \$425

BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT  
ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES

01.900598, 901598  
03.258336, 256254  
www.orientplus.com

**ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ**

● ՆՈՐԿՐԻՄԱՆԻ նախագահ Նեպի Պրերի երէկ շեշտեց, որ Լիբանան չ'ընդունիր ըլլալ խաղաղութեան ճամբու քարտէսին եւ պաղեստինցի գաղթականներու բնակեցման վայրերուն միջեւ լարուածութեան կտուախնձորը:

Պրերի մերժեց որեւէ «չափապանցութիւն», որ կը յանգի Պեքաւայի կամ որեւէ այլ շրջանի բաժանումին: Ան կոչ ուղղեց ամրապնդելու ներքին միասնականութիւնը:

Պրերի այս յայտարարութիւնները կատարեց Պալատի մէջ հիւանդանոցի մը բացման հանդիսութեան, զոր կը հովանաւորէր անձամբ: Ան կոչ ուղղեց Պեքաւայի բնակիչներուն՝ ապահովութիւն ու կայունութիւնը պահպանելու «երկաթեւ պալուկներով»:

● ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ Նասրալլա Պուրոս Սֆէյր պատրիարքը Կիրակի օրուան իր քարոզին մէջ մտահոգութիւն յայտնեց իրենց ապագայով մտահոգ երիտասարդութեան մասին:

Սֆէյր պատրիարքը նկատել տուաւ, որ երիտասարդութիւնը իր ստացած բարձրագոյն ուսմամբ եւ վկայականներով հանդերձ մտահոգ է իր ապագայով՝ աշխատանքի բաւարար դաշտի չզոյրութեան պատճառով:

Սֆէյր պատրիարքը շեշտեց, որ հայրենիքը իր պատկանելութեան համար հայր մըն է եւ պէտք չէ պանոնք լքել ճամբուն վրայ, ինչպէս պէտք չէ լքել հայր մը, երբ ան հիւանդութեան կը տառապի:

● ԵՐԵՍՓՈՒՄՆԱՆ Ապտալլա Քասիր երէկ կատարած իր յայտարարութիւններուն մէջ կոչ ուղղեց պատասխանատուներուն ու կառավարութեան՝ չանտեսել քաղաքացիներուն պահանջները, այլ վարուիլ անոնց հետ հարկ եղած ձեւով: Քասիր կոչ ուղղեց նաեւ ներլիբանանեան շարքերու խտացման եւ միասնականութեան ամրապնդման, ինչպէս նաեւ դրուատեց նախագահ Պաշտար Ասատի կեցուածքը Լիբանանի նկատմամբ, յատկապէս՝ անոր Դիմադրութեան:

● ԸԼԶ ՊԱՆԱՅԻ հոգեւոր պետ Մոհամէտ Հիւսէյն Ճատլալլա անդրադարձաւ Փաքիստանի մէջ մկիթի պայթումին եւ նկատել տուաւ, որ հարցը շիիներու եւ սիւնիիներու հարց չէ, այլ՝ անոր նպատակն է բաժնել իսլամները:

● ՎԱՐՉԱՊԵՏ Ռաֆիք Հարիրիի հովանաւորութեամբ երէկ «Էլ. Էյ. Եու» մէջ կայացաւ վկայականներու բաշխման հանդիսութիւնը: Վարչապետ Հարիրի իր խօսքին մէջ շեշտեց, որ կառավարութիւնը արեւելի իսկ սկսած է քննարկել որոշ համայնքայիններու պետական օրէնքային ճանչցում եւ պաշտօնակալ արտօնագիրներ շնորհելու թղթածրարը:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան նաեւ երեսփոխաններ Ատնան Արաբժի եւ Դիւուս Ժալլու:

● ԵՐԵՍՓՈՒՄՆԱՆ Եսաին Ժապէր շաբաթավերջին կատարած իր յայտարարութիւններուն մէջ կոչ ուղղեց ներքին միասնականութեան ամրապնդման, նկատել տալով, որ շրջանը կը դիմագրաւէ դժուար կացութիւն մը:

Ժապէր շեշտեց, որ անհրաժեշտ է ազգային հասարակարգի շահերը աւելի բարձր դասել անձնական շահերէն:

**ԱՅԿԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

**RENT AND SALE**

**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

ՑՈՒՑԱՐԱՐԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՅՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԵՏԻ ԺԵՒԵ, Բ. ՅԱՐԿ ԵՆՌ. (02) 242556/7

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեւանի Պետական համալսարանի դահլիճին մէջ, 26 Յունիսին, հանդիսարար արարողութեամբ կատարուեցաւ փակումը հայոց լեզուի եւ գրականութեան առաջին միջազգային ողիմպիականին, որուն իրենց մասնակցութիւնը բերին նաեւ գտնուի քննութիւնները յաջողապէս աւարտած Ազգային վարժարաններու երէք ուսանողուհիներ, Լիբանանը ներկայացնող երկու այլ թեկնածուներու կողմէն:

Ուրախ ենք յայտարարելու, որ 6 երկիրներու (Լիբանան, Սուրիա, Իրան, Ռուսաստան, Չախաբ եւ Հայաստան) 30 ներկայացուցիչներու շարքին, իրենց մասնակցութիւնը բերին Անուշ Գերայպեան, Վարդէնի Էթոյեան (Ազգային Լեոնի եւ Սոֆիա Յակոբեան քոլէճէն) եւ Արաքս Աղանեան (Ազգային Յատուց. Գ. Կիւլպէնկեան երկրորդական վարժարանէն): Վերջին վարժարանէն մասնակցելու իրաւունքը ձեռք ձգած չորրորդ թեկնածու մը չկրցաւ Երեւան մեկնիլ՝ պարտութեան պետական քննութեան պատճառով:

Ազգային վարժարանները ներկայացնող մեր աշակերտուհիները արդարացուցիչ իրենց վրայ դրուած յուշերը: Ազգային Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճի աշակերտուհիներէն Անուշ Գերայպեան արժանացաւ Կոչ մրցանակներու՝ գրաւելով առաջնութիւնը «Հայոց լեզու եւ գրականութիւն» եւ «Պատանի ստեղծագործող» մրցումներուն:

Լիբանանի հայկական վարժարաններէն այլ կարգի եւ տարբեր բնոյթի նիւթերու մրցանակներու տարացան նաեւ Փաթիլ Եսայեան (Համազգայինի Մելանքոնի եւ Հայկ Արալանեան ձեռնարանէն) եւ Մեղրի Խօշեան (Հայ Աւետարանական քոլէճէն):

Վարձքը կատար իբրանահայ վարժարաններու երէք մրցանակակիրներուն եւ հայ լեզուի եւ գրականութեան անոնց ուսուցիչներուն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### ՂԱԶԱԽՍԱՆ, ԽԵՐԽԵԶԻՍԱՆ, ՏԱՃԻԿԻՍԱՆ ԵՒ ՌՈՉՊԵՔԻՍԱՆ ԿՈՐՈՇԵՆ ՄԻԱՆԱԲԱՐ ՊԱՅՔԱՐԻԼ ԹՄԲԵՑՈՒՑԻՉԻ ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՀԱՐԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Կեդրոնական Ասիոյ նախկին խորհրդային չորս երկիրներու ղեկավարներ Այմաթի մէջ Շարաթ օր կայացած վեհաժողովի մը ընթացքին որոշած են միասնաբար աշխատիլ՝ իրենց անկայուն շրջանին մէջ թմրեցուցիչներու, ահաբեկչութեան եւ իսլամական ծայրայեղականութեան դէմ պայքարելու համար:

Ղապախտանի նախագահ Նուրուլլան Նապարպաեւ, Խրրիքիստանի, Տաճիկիստանի եւ Ուզպեքիստանի իր պաշտօնակիցներուն հետ կայացուցած վեհաժողովէն ետք, թղթակիցներուն յայտնած է, թէ իրենց պետութիւնները առանձին չեն կրնար պայքարիլ նշեալ հարցերուն դէմ:

«Պէտք է համաձայնութիւն գոյացնենք ըստ օրէնսդրութեան մը, որ մեր խորհրդարաններուն համար առաջնահերթութիւն պէտք է ըլլայ», ըսած է ան, աւելցնելով, որ դատախաչները, ապահովութեան ուժերը, ներքին գործոց նախարարութիւնները եւ մասնաշարժայիտ ուժերը պէտք է գործակցին՝ նոյն թիրախները իրականացնելու համար:

Տաճիկիստանի նախագահ Իմամալի Ռախմոնով, Ուզպեքիստանի նախագահ Իսլամ Բարիւնով, Խրրիքիստանի ղեկավար Ասրար Արաեւ եւ Նապարպաեւ իրենց տարակարծութիւնները մէկ կողմ ձգած՝ համաձայնագիրներ կնքած են՝ 1991ին խորհրդային Միութեան քայքայումին պատճառով ստեղծուած հարցերուն լուծման համար:

### ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ԹԵՀՐԱՆ. - Իրանի կառավարութիւնը երկդարձեալ մերժած է տեղի տալ պահանջներու՝ անմիջապէս եւ առանց նախապայմանի արտօնելու ՄԱԿի քննիչներուն, որ իր կորիզային ծրագիրը աւելի անարմատութիւն քննէ, շեշտելով, որ այդ գծով որոշում մը աւելի երկար ժամանակի եւ քանակութեան կը կարօտի:

● ԱԼԺԷ. - Ալձերիոյ մէջ երէք անձեր, որոնց կարգին՝ երկրին իշխող կուսակցութեան անդամ խորհրդարանական մը, Քապիլիի շրջանին մէջ սպաննուած են Ուրբաթ գիշեր, 30 Կինեայներու կողմէ:

● ՊՈԼՒՍ. - Թուրքիոյ հարաւարեւելեան շրջանին մէջ, քիրտ երէք ըմբոստներ եւ թուրք պիւտր մը սպաննուած են Շաբաթ օր՝ անջատ դէպքերու ընթացքին: 3 Կինուրներ ծանրօրէն վիրաւորուած են:

● ՓԱՐԻՉ. - Աշխարհի բնակչութեան գրեթէ 50 առ հարիւրը՝ 3 միլիարդ մարդ, օրական 2

տոյար կամ նուազ գումարով կը գոյատեւէ, իսկ աշխարհի ամէնէն հարուստներուն եւ աղքատներուն միջեւ վիճի 40 տարուան մէջ կրկնապատկուած է, կը հաղորդէ Աշխատաւորական Միջազգային կազմակերպութիւնը:

**TANIA TRAVEL**  
Sodeco Square - Rue Damas  
Tel: (01) 616555 (pbx) - Fax: (01) 616561  
Rue Sidani - Face cinema Jeanne d'Arc  
Tel: (01) 739682 (pbx) - Fax: (01) 340473  
Website: <http://www.taniatravel.com>

**CHARTERS ARMENIE**  
Programme avec Tours (7 et 8 jours)

**ATHENES**  
RHODOS, MYKONOS, CORFU & CRETE  
Croisières vers les Iles Greques

**RHODES**  
Départs tous les Mardis à partir du 15/07  
(8 jours)

**PARIS+COTE D'AZUR**  
Avion - Grand choix d'Hôtels en B/B  
Possibilité d'extension à Londres, Eurodisney etc.

**ITALIE** (du Nord et du Sud)  
10 Programmes différents (8 à 15 jours)

**AUTRICHE**  
Différents programmes, Hôtels, Tours

**ESPAGNE, PORTUGAL et MAROC** (Villes Impériales)  
10 Programmes différents (8 à 18 jours)

**EGYPTE**  
Le Caire & Croisière sur le Nil-Luxor & Assouan  
Sharm el Sheikh, Hurghada, Alexandrie

**CIRCUIT TUNISIE**  
Sousse & Hamamet

**MALAISIE & THAILANDE**  
Différents programmes (Tours organisés)

**POSSIBILITES DE CREDIT**  
Jal-el-Dib 710305/67 Journeis: 913746/934465  
Bilblaye: 982040 Kaslik: 218821/213321  
Jbeil: 942744/943388 Zahle: 806947/802592  
Saïda: 730870/736870 Tripoli: 627755/602469  
Amioun: 93075

galerie  
**PIERROT**  
Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans



galerie  
**PIERROT**  
Liste de Naissance et de Bâtieme  
Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

● Դանիել Դանիելեանի մահուան առիթով, հետեւեալ նուիրատուութիւնները կատարուած են Արագածի «Դրօ» ակումբին:

Տր եւ տիկին Մանուկ Գրիգորեան 10,000 լ.ն., տր եւ տիկին Յովսէփ Գազանձեան 10,000 լ.ն., տր եւ տիկին Յարութ Դանիելեան 20,000 լ.ն., տր եւ տիկին Թոնի Գազանձեան 25,000 լ.ն., տիկին Էւա Գազանձեան 15,000 լ.ն., տր եւ տիկին Սարգիս Միքիլեան 20,000 լ.ն., տր եւ տիկին Յակոբ Յակոբ Միքիլեան 10,000 լ.ն., տր եւ տիկին Յակոբ Գալայձեան 10,000 լ.ն., տր եւ տիկին Երուանդ Դանիելեան 30,000 լ.ն., տր եւ տիկին Արմէն Դանիելեան 20,000 լ.ն., պրն. Վարդան Հազրեան 20,000 լ.ն., տր եւ տիկին Մանուկ Քերոյեան 15,000 լ.ն., տր եւ տիկին Սահակ Դանիելեան 10,000 լ.ն., տր եւ տիկին Փոլ Նեպիեան 30,000 լ.ն., Արարհամ Դանիելեան (Ֆրանսա) 150,000 լ.ն., Արմէն Կարո 5,000 լ.ն., տր եւ տիկին Յարութ Յարութեան 30,000 լ.ն., Չոհրապ Դանիելեան 20,000 լ.ն., տր եւ տիկին Յովհաննէս Դանիելեան 20,000 լ.ն.:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ ՀԵՏԵԻՑԷԲ  
«ԱՍՏՂԱՀՈՅԼ»  
ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻՆ

Դիմագրքի, 10 Յունիս 2003, կեսօրը ետք ժամը 5:00ին «Աստղահոյլ»ը նուիրուած է ազգագրագետ, յորհող, մտաւորական, երաժիշտ եւ խմբավար՝

**ԱԼԵՔՍԱՆ ՄՆԱԿԵԱՆԻ**

Իրենց յուշերը կը պատմեն Համազգայինի «Զնար» պարախումբի նախկին պարուսոյց

**ՏԻԿԻՆ ԳԱՐԻՆԱ ԱԼԵՔՍԱՆՏՐԵԱՆ**

Լիբանանցի մեծ յորհող

**ՄԱՆՍՈՒՐ ՌԱՀՊԱՆԻ**

Հաղորդաչարի խմբագիր՝ Ա. ԱՊՏԱԼԵԱՆ  
Պրատումներ՝ տիկին Շ. ԲՍՏՈՅԵԱՆ

Մի՛ մոռնաք ունկնդրելու «Աստղահոյլ»ը:

**FUEL CARDը գործածեցէք**

Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւրը փոխելու կամ գանոնք լուսալու պարագային:

Երբ մագուլթ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

▶ MANAR - Տորա  
▶ ԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Յամուտ  
▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ  
▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպան»ի մօտ  
▶ SPEED - Յանքաշ, Կալէի Իթթիատ  
▶ ՅԱՅԱՎԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմագա»  
▶ MALLAH - Անթիլիաս, կաթոնկոսարանի դիմաց

▶ MALLAH - Յարթ Ղաուարնէ  
▶ MALLAH - Պալիմ  
▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի  
▶ CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցույ մօտ  
▶ SAAD - Մար Միայել  
▶ SPEED - Նահր, «Փէօժօ» ընկերութեան մօտ  
▶ PHOENICIA - Այնճարի մուտքին  
▶ MALLAH - Պապատք



# ԶԱԽԱՐԵԱՆԱԿԱՆ

# ԶԱԽԱՐԵԱՆԱԿԱՆ

## ԵՐԻՏԱՍԱՐԴ

## ՅՈՒԵՏԵՍՈՒԹԻՒՒՄ ԻՆՔՆԱԽԱԲԷՌԻԹԻՒՄ...

## ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՅՈՅՍԵՐՈՎ...

Լաւարեւոր անչ մըն է, որ կը փնտձի կանայ յոյսը ամէնուրեք, մինչ յոռեւորեալ միայն կը նշմարէ ընդհակառակ կարմիրը... Ծննդաբերութիւնը գոյնէրը չնկատող մարդն է:

Կերպուած միաւորները, չկան միասնական մտեցումները, չկան համընդհանուր շահերու իտէլայները եւ կան միայն «չկաններ»...

### ԱԼՊԵՐԹ ՇՈՒԷՅՏՁՐԻ\*

մէջ հետզհետէ տեղ գտնող յոռի «բարք»երու թափանցումը:

Շարունակ տուններուն մէջ կը նշմարենք թրքերէն դիտողներու ու խանութներու մէջ թրքական արտադրութիւններ քաջալերողներու «աճ»ը: Մեր ածուրն մէջ օտարամուտութիւնները այլեւ «ընդունելի» կը նկատուին երիտասարդութեան կողմէ, որ նաեւ հայապահպանման պրիմալ կէտէն դիտողներու խմբակը կը համարէ «յետագիւմական» մտածողները...

Այնուհետեւ, կը հաստատենք, որ երիտասարդութեան ու ուսանողութեան անտարբերութիւնն ու անպատասխանատու մտեցումները հետզհետէ կ'աւելնան ու անոնց մօտագոյն գաղափարաստեղծութիւնը, հայրենիքի ու հայրենադարձութեան գաղափարները քայլ առ քայլ կը նահանջեն...

Ու տակաւին կը հաստատենք, որ հաւաքակալութեան մէջ իբրեւ մէկ միաւորի հասկացութիւնը նահանջ կ'արձանագրէ, ուր անհատական հասկացողութիւնները ու նաեւ շահերը այսուհետեւ ընդհանրապէս գերազանց կը նկատուին հաւաքական շահերէն՝ ազգային ըմբռնողութեանէն...

Եւ այսօր չկան կազմա-



Ուսանողներուն համար չկայաւելի մեծ ուրախութիւն, քան այն պահ, երբ կ'աւարտին քննութիւնները, եւ կը սկսի սպասուած արձակուրդը: Հայ ուսանողը նոյնպէս կ'ապրի այս հրճուածութեամբ, բայց իր երեւոյթները կը տարբերուին իր ընկերներից, որովհետեւ իրենց թափափախութեան մէջ գոյութիւն ունին կարգ մը վարժարաններու անուններ, որոնցմէ ժառանգուած կը մնան քարաշէն կառոյցները յուշեր րոպանդակող փակ մատեաններ...

ոչնչութեան: Ինչպէս հայ աշակերտ-հայրական վարժարան կապեր կը մնայ անբաժանելի, այդպէս ալ մեզմէ կը պահանջուի օժանդակել այդ կապի ամրացման, զարգացման եւ բազմապատկել թիւը թէ՛ հայ ուսանողներու, թէ՛ հայրական վարժարաններու, որպէսզի զիրար քննադատելու կամ «նստիկանական հակոցներ» ներկայացանք, որոնցմէ ժառանգուած կը մնան քարաշէն կառոյցները յուշեր րոպանդակող փակ մատեաններ...

### ՐԱՅՏԻ ՏԵՄԻՐՃԵԱՆ

\* Յրամանացի փիլիսոփայ, երաժշտաբան եւ բնագետ: 1952ին արժանացած է խաղաղութեան մոպեթիան մրցանակին:

Մամուլը ժողովուրդին միջոցաւ յաճախ անդրադարձած այս երեւոյթին եւ ուշադրութեան յանձնեց հայ վարժարաններու դերակատարութիւնը, հայեցի դաստիարակութիւնը, օտարամուտութեան դէմ պայքարելու կարեւորութիւնը ու այն բոլոր բացասական կամ դրական տրեւելները, որոնք կը դժուարացնեն կամ կը դիւրացնեն սփիւռքահայութեան կեանքը եւ յարատեւելու ոգին:

«Երիտասարդ» մեր մօտ շատ ծամծմուած բառ է: Զայն կը գործածենք առատօրէն, զետեղութեամբ եւ յաճախ... անտեղի կերպով:

Այո՛, անտեղի: Որովհետեւ սխալ է պատանեկութիւնը բոլորած, բայց տակաւին ծերութեան նախագաւթի չհասած ամէն անհատ երիտասարդ կոչել, ճիշդ այնպէս, ինչպէս սխալ է բոլոր տարիքոտ մարդոց «ծեր» կոչել, որովհետեւ անոնց հոգին ու միտքը կրնան այնքա՛ն երիտասարդ ըլլալ տակաւին:

Մեր շուրջը կը գտնուին բազմաթիւ չակերտեալ երիտասարդներ: Անոնք վաղահաս ծերութեան մը կ'ապրին կարծէք, եւ եթէ չըլլար անոնց խրոխտ քալուածքը եւ գիշերային խննջ կեանքը, հաւանաբար անոնք բնապիտի չտարբերէին ձեր մեծ հօրմէ կամ մեծ մօրմէ:

Երիտասարդ՝ հակառակ անոր, որ անոնք կը վայելեն երիտասարդի իրաւունքները, առանց իսկ մտածելու երիտասարդի պարտաւորութիւններուն մասին:

Երիտասարդ՝ հակառակ անոր, որ դեկամարի, առաջնորդի, եւ անխոնջ աշխատողի իրենց պաշտօնները անոնք յանձնած են «ծեր»երուն, եւ իրենք կը գրադին (այստեղ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել «կը պարապին») սեռային կեանքով, ալքոլամոլութեամբ եւ մասամբ նորին:

Սակայն չհամարձակի՛ք զանոնք «ծեր» կոչել. անոնք կրնան ընդվզիլ, զայրանալ եւ իրենց երիտասարդի տաքարինութեամբ յանկարծ յարձակին ձեր վրայ: Բայց միայն այդքան: Աւելին մի՛ սպասէք: Մի՛ սպասէք աշխատանք, պայքար, նուիրում, յանձնառութիւն եւ այլ առաքինութիւններ, որոնք այսօր ջախջախիչ փոքրամասնութեան մը մօտ կը գտնուին միայն:

Եւ զարմանալին այն է, որ այսպէս կոչուած «Երիտասարդ»ները յաճախ հեզանքով կը մօտենան ազգին նուիրուած երիտասարդին: «Գնա՛ կեանքդ վայելէ, ասանկ բաներէ հաց չ'իլեր...», կ'ըսեն ծառայասէրին եւ կ'երթան իրենց «հաց»ը գնելու անբարոյութեան եւ ծուլութեան փուռերէն:

